Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 040226281 արձանագրության համաձայն ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 408 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N40.564619 E44.999337 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված և կառուցված 2 հատ մետաղական կոնստրուկցիաներով զրուցարան: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել են շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե)

կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել N40.564619 E44.999337 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2754-Ա

ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 040226289 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N40.512455 E44.966759 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 040226249 արձանագրության համաձայն ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 398 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N 40.512455 E 44.966759 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված և կառուցված 10 հատ վագոն-տնակ, 6 հատ զրուցարան: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել են շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե)

կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել N40.512455 E44.966759 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները ապամոնտաժել:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2755-Ա

ՍՎԵՏԼԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել Սվետլանա Կարապետյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԳՈՒՇԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 07
ք.Սևան

3033

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2756-Ա

ՄԱՆՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել Մանվել Բաղդասարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 07
ք.Սևան

3034

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2757-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Անդրանիկ Վարդանյանի դիմումը՝ Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990թ.դեկտեմբերի 15-ի թիվ 12 նիստի որոշմամբ Անդրանիկ Վարդանյանին՝ ք. Սևան, հացամթերքների արտադրական միավորման գործարանի հյուսիս արևելյան հատվածից անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 600քմ մակերեսով հողատարածքից ավել օգտագործված հողատարածքն Անդրանիկ Վարդանյանին տրամադրելու մասին, հաշվի առնելով որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը՝ **որոշում եմ.**

1. Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990թ. դեկտեմբերի 15-ի թիվ 12 նիստի որոշմամբ՝ Անդրանիկ Վարդանյանին /ծնված՝ 13.09.1960թ./ հատկացված 600քմ մակերեսով հողատարածքին կից՝ 120քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Անդրանիկ Վարդանյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Երիտասարդական փողոց թիվ 5 / 1 հողամաս հասցե:
2. Անդրանիկ Վարդանյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Երիտասարդական փողոց թիվ 5 / 1 հողամաս հասցեում գտվող 720քմ մակերեսով հողատարածքին կից՝ 135.4քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Երիտասարդական փողոց թիվ 5 / 3 հասցե, ուղղակի վաճառքի կարգով՝ հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝ 563.25դրամ/ օտարել Անդրանիկ Գավրիկի Վարդանյանին:
3. Պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆԵՑ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3035

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2758-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Վարսեր բնակավայրի հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.05915հա մակերեսով հողամասը /գ. Վարսեր/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Վարսեր բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի, 56-57կմ 22 / 3 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3036

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2759-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.06973հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատում՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 49 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3037

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2760-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 17 / 38 հասցեում գտնվող, բնակավայրերի՝ նպատակային նշանակություն, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակություն ունեցող 0.00196հա մակերեսով հողատարածքի /վկայական՝ N 05102026-05-0032/ գործառնական նշանակությանը փոխել ընդհանուր օգտագործման նշանակության:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3038

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2761-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ, ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ, ՏԵՂԱԴԻՐՔԻ ՈՒՂՂՄԱՆ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ Սևան համայնք, ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 33 / 10 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 24022025-05-0053/ գծային չափերը, երկրաչափական պատկերը, տեղադիրքը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Սևան համայնք, ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 33 / 10 հասցեում գտնվող անշարժ գույքի գծային չափերը, երկրաչափական պատկերը և տեղադիրքը:
2. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան Ս. Շահումյան փողոց թիվ 33 / 10 հասցեում գտնվող բնակավայրերի՝ նպատակային նշանակություն, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակություն ունեցող 0.00555հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակությանը համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակություն:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3039

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2762-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արամ Լևոնի Նավասարդյանի լիազոր անձ Լևոն Նավասարդյանի դիմումը՝ սեփականության իրավունքով Արամ Նավասարդյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 2216961, տրված՝ 30.08.2005թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց թիվ 94 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3040

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2763-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2026թվականի բյուջեի ընդհանուր բնույթի ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 6 դաս 1, հոդված 4823 / Սևան համայնքի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանի անվամբ բացված ՀՀ Ֆինանսների նախարարության հ/հ-ին՝ 1510092444854400 փոխանցել 424800 դրամ՝

1) Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող և խմելու-կենցաղային նպատակով օգտագործվող «Այծեմնասար» աղբյուրի՝ Բնաղբյուրի վերաբերյալ հիդրոերկրաբանական տեղեկատվության և անձնագրի կազմման պայմանագրի հայտ ներկայացնելու համար՝ 212.400 դրամ:
2) Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող և խմելու-կենցաղային նպատակով օգտագործվող «Բեթխեհեմ» աղբյուրի՝ Բնաղբյուրի վերաբերյալ հիդրոերկրաբանական տեղեկատվության և անձնագրի կազմման պայմանագրի հայտ ներկայացնելու համար՝ 212.400 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3041

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2764-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Սեմյոնովկա հասցեում գտնվող 1.25781 հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 15042025-05-0058/, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 3 միավոր գույքի՝

1) առաջին միավոր գույք՝ 0.87442 հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողամաս;
2) երկրորդ միավոր գույք՝ 0.16127 հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողամաս;
3) երրորդ միավոր գույի՝ 0.22212 հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողամաս:

2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3042

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2765-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Խաչիկ Հակոբյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գյուղ Նորաշեն, բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1000204, տրված՝ 06.03.2003թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Նորաշեն, բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գյուղ Նորաշեն, 3-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 1 / 1 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3043

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2766-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 18-րդ կետերով և 11-րդ կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Սմբատ Գուրգենի Պետրոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Զովաբեր հասցեում գտնվող 0.182հա մակերեսով հողատարածքում ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, հաշվի առնելով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Լեռնիկ Ալբերտի Այվազյանի պատկանող, 05-024-0037-0013 կադաստրային ծածկագրով 4323.4 քմ մակերեսով հողատարածքում 1995 թվականին ինքնակամ կառուցված 152.56 քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 133.06 քմ/, 27.13քմ մակերեսով նկուղը / ներքին մակերեսը՝ 18.72քմ/ ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026CUY8VG/՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Գեղամավան, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք թիվ 16 բնակելի տուն հասցե՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 874 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3044

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2767-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Հասմիկ Հարությունյանի դիմումը՝ ք. Սևան, Րաֆֆու փողոցի թիվ 19 հասցեին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 1.57 քմ մակերեսով պարիսպն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Հասմիկ Դրաստամատի Հարությունյանի կողմից՝ ք. Սևան, Րաֆֆու փողոցի թիվ 19 հասցեին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 1.57 քմ մակերեսով պարիսպը և զբաղեցրած 135.70քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Հասմիկ Դրաստամատի Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված 1.57 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026ԲԿՇԵԿԴ/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Րաֆֆու փողոց թիվ 19 / 2 պարիսպ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2768-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ՓԱՐՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով քաղաքացի Գրիգոր Փարսյանի կողմից ինքնակամ տեղադրված շինութունների փաստը՝ պարզեցի. ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից կազմված 040226306 արձանագրության համաձայն՝ քաղաքացի Գրիգոր Փարսյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա են ինքնակամ տեղադրված շինություններ՝ երկու երկու ոչ հիմական փայտից տաղավար՝ բետոնե հարթակով, ինչպես նաև մեկ հատ փայտից ոչ հիմնական շինություն: Քաղաքացի Գրիգոր Փարսյանը 2007 թվականի հունիսի 27-ին՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի հետ կնքել է N 813 պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր: Ըստ պայմանագրի՝ հողատարածքի մակերեսը 2500քմ է: Սևանի համայնքապետարանը սահմանված կարգով ծանուցագրեր է ուղարկել քաղաքացի Գրիգոր Փարսյանին: Նա հրավիրվել է համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու, ինչպես նաև պարզաբանումներ տալու նպատակով: Սակայն քաղաքացին երբևէ չի ներկայացել Սևանի համայնքապետարան: Այնուհետև քաղաքացուն ուղարկվել է ծանուցագիր վարչական գործի քննությանը մասնակցելու համար, սակայն կրկին չի ներկայացել: 2026 թվականի սեպտեմբերի 16-ին՝ Սևանի համայնքապետարանի տեղազննող հանձնախմբի կողմից Գրիգոր Փարսյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում կատարվել է ուսումնասիրություն ինքնակամ շինությունների փաստով, որի արդյունքում պարզվել է, որ տարածքում առկա են ինքնակամ տեղադրված շինություններ: Առկա են տարածքում ինքնակամ տեղադրված շինությունների լուսանկարները: Հետագայում քաղաքացու կողմից ապամոնտաժվել և տեղափոխվել են երկաթ բետոնե հարթակները: Վարույթի շրջանակներում հիմնավորվել է, որ Գրիգոր Փարսյանը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջները՝ առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները կառուցվել կամ տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարծքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին

պատկանող, պետական սեփականություն հանդիսացող, բնության հատուկ պահպանվող հողատարածքներ: ՀՀ Կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինությունների ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: Քաղաքացի Գրիգոր Փարսյանի կողմից տեղադրված կամ կառուցված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրացիոն գոտում: Բոլոր շինությունները գտնվում են 1905.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքներում: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ քաղաքացի Գրիգոր Փարսյանին կառուցապատման իրավունքով տրված հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները ապամոնտաժել:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնումօրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ [redacted] ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3048

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2769-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՉ ԱՐՄԵՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Հրաչ Եղիազարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից՝ 2026 թվականի օգոստոսի 25-ի իրավախախտում կատարելու վերաբերյալ N 040226318 արձանագրության համաձայն՝ քաղաքացի Հրաչ Եղիազարյանը, առանց կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի, ապօրինի զավթել է Սևանա լճի առափնյա գոտում գտնվող հողատարածք և իրականացրել է ապօրինի առևտրական գործունեություն «PEPSI» գրառմամբ վրանների միջոցով: Սևանի համայնքապետարանը սահմանված կարգով ծանուցագիր է ուղարկել քաղաքացուն, համայնքապետարան ներկայանալու, պարզաբանումներ և բացատրություններ տալու նպատակով: 2026 թվականի սեպտեմբերի 7-ին քաղաքացին Սևան համայնքի ղեկավարին է ներկայացրել բացատրություն այն մասին, որ Էկոպարեկային ծառայության կողմից իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն կազմելուց անմիջապես հետո նա հեռացրել է «PEPSI» գրառմամբ վրանները և դադարեցրել է առևտրական գործունեությունը: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել այն փաստը, որ տվյալ վրանները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող, պետական սեփականություն հանդիսացող, բնության հատուկ պահպանվող հողատարածքներ: Քաղաքացի Հրաչ Եղիազարյանը իր գործողություններով խախտել է ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները, այն է քաղաքացին ապօրինի զավթել է պետական սեփականություն հանդիսացող հողատարածք: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ապօրինի հողազավթումը, ընդունում է որոշում ինքնակամ շինությունների ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: Քաղաքացի Հրաչ Եղիազարյանի կողմից տեղադրված վրանները գտնվել են Սևանա լճի ռեկրացիոն գոտում: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի

ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հրաչ Արմենի Եղիազարյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:
2. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ քաղաքացի Հրաչ Արմենի Եղիազարյանի կողմից ապօրինի զավթված հողատարածքը սահմանված կարգով վերադարձնել ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տիրապետմանը:
3. Վարչական տուգանքի գումարը վճարել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրյա ժամկետում Սևան համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
4. Սույն որոշման 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով: 5.Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3050

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2770-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Արմեն Կարապետյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Շինարարների փողոցի սկզբնամասում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 41.95քմ մակերեսով ավտոտնակի շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատար ածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Արմեն Խաչատուրի Կարապետյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Շինարարների սկզբնամասում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 41.95 քմ ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 36.71քմ/ և զբաղեցրած 41.95քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Արմեն Խաչատուրի Կարապետյանի կողմից ինքնակամ կառուցված 41.95 քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20233SCJ42/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 59 / 8 ավտոտնակ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2771-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Արման Հայրապետյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Արման Հայրապետյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Շ. Ազնավուրի փողոց թիվ 25 հասցեում արտաքին ջրագծի և կոյուղագծի կառուցման համար:
2. Արման Հայրապետյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Արման Հայրապետյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 08
ք.Սևան

3053